Տ. ՍԻՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 հունվարի 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես եմ, մի՛ երկնչիք»
(Յով. Զ. 20-21):

Սիրելի՛ հավատացյալ ներկաներ,

Տերունավանդ այս խոսքերը դարձրել ենք մեզ համար օրվա խորհրդածության նյութ: Վախը մեծ տեղ ունի մեր կյանքում: Մարդկությունն անմասն չէ տնտեսական, քաղաքական, հոգեւոր եւ բարոյական վախերից: Մենք վախենում ենք ներկայից, ապագայից, մահասփյուռ հիվանդություններից, կյանքից, մահվանից, հավիտենական կյանքից զրկվելուց: Մեկ խոսքով՝ մարդկությունը չի կարողանում հրաժարվել, իրենից հեռացնել վախ կոչվող «հիվանդությունը»: Վախի ապրումից անմասն չէին նաեւ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի աշակերտները: Հովհաննու Ավետարանից հիշենք Քրիստոսի եւ աշակերտների նավարկությունը Տիբերական լճում: Հանկարծակի ալեկոծություն է բարձրանում, հողմը սաստկանում է, եւ աշակերտները կարծես թե զգում են իրենց մոտալուտ մահը (հմմտ. Հովհ. Զ. 16-19): Եվ ահա նրանց է մոտենում Հիսուս եւ հանդարտեցնելով ու քաջալերելով աշակերտներին՝ ասում է. «Ես եմ, մի՛ վախեցեք» (Հովհ. Զ. 20): Ծովի ալեկոծությունը վարկենապես դադարում է, հողմը տեղի է տալիս: Անշուշտ, Տերը նկատել էր աշակերտների մտահոգությունը, վախը, տագնապը, եւ հակառակ այն փաստին, որ ժամեր առաջ էին տեսել, թե ինչպես է իրենց Ուսուցիչն Իր աստվածային փառքով եւ զորությամբ հրաշք գործում, միեւնույն է, շարունակում էին խարխափել թերահավատության մեջ:

Սիրելինե՛ր, Աստվածաշունչ մատյանը առաջին անգամ խոսում է վախի մասին Ծննդոց գրքում: Մեր նախահայրերը Աստծո կամքին հակառակ ընթացան, մեղք գործեցին, եւ վախենալով՝ փորձեցին թաքնվել Աստծո բարկությունից (հմմտ. Ծննդ. Գ. 8): Հավանաբար, շատերս նույն մտայնությամբ ենք ապրում նաեւ այսօր. երբ մեղք ենք գործում, փոր-

ձում ենք թաքնվել օրենքից, պատասխանատվությունից ու Աստծո դատաստանից:

Սիրելինե՛ր, հոգեւոր առումով վախը, ըստ էության, ճգնաժամ է: Միջնադարում չինացիները ճգնաժամ բառը բացատրելու համար օգտագործում էին երկու հասկացություններ՝ վտանգ եւ բարենպաստ հնարավորություն: Ահավասիկ, շատերս մեր կյանքում վախը դիտարկում ենք իբրեւ վտանգ, որ սպառնում է մեր կյանքին, ունեցվածքին ու հաճախ գիտակցելով այդ վտանգը՝ փորձում ենք բուժում գտնել, իսկ բուժումը դառնում է փախուստը՝ դժվարությունից, պատասխանատվությունից, Աստծուց եւ ի վերջո փախուստ ինքներս մեզանից:

Ահա այս իրականության մեջ հասկանում ենք, որ վախն անջրպետ է դառնում Աստված-մարդ առողջ հարաբերությունների մեջ, սակայն, եթե ուշադիր ենք ընթերցում Ավետարանը, Քրիստոս մի քանի դրվագներում տալիս է մեզ վախը թոթափելու բալասանն ու դեղատոմսը՝ ասելով. «Ես եմ քաջ հովիվը» (հմմտ. Հովհ. Ժ. 11), «Ես եմ հարությունը եւ կյանքը» (հմմտ. Հովհ. ԺԱ. 25) «Ես եմ կենաց հացը» (Զ. 35), «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը» (հմմտ. Հովհ. ԺԴ. 7), եւ ի վերջո «Ես ձեզ հետ եմ մինչեւ աշխարհի վախճանը» (հմմտ. Մատթ. ԻԸ. 20): Ահա մի երաշխիք, որ մարդկությանը կարող է ձերբազատել յուրաքանչյուր վախից եւ տագնապից:

Ի. դարի ամերիկացի հայտնի նովելիստ Իրվին Շոուն հետաքրքիր մի պատմվածք ունի, որ վերնագրել է՝ «Աստված մեզ հետ էր, բայց գնաց»: Այս խոսքերը ժամանակի ծանրությունից պարտված եւ ներքուստ ամայացած մեր կյանքի վերնագիր կարող ենք դարձնել եւ մենք, որ հազիվ թե զգում ենք Աստծո ներկայությունը (եթե, իհարկե, զգում ենք) եւ մեր կենսակերպով Աստծուն «վտարում» ենք մեր կյանքից՝ փորձելով ապրել առանց Նրա:

Սիրելի՛ ներկաներ, այսօրվա ավետարանական պատգամի եւ մեր Տիրոջ քաջալերանքի խոսքերի վերաբերյալ խորհրդածությունները կարող ենք անել յուրովի: Հարկ է հիշել միայն, որ մեր Տերը չի ուզում, որպեսզի ապրելով այս աշխարհում՝ մնանք վախի, տագնապի ճիրաններում, մեզ տալիս է ելքը՝ ունենալու այն հավատքի ջահը, որ ժառանգել ենք Իրենից, ընթանալու այն ճանապարհով, որ Ինքն է ուղենշել մեզ համար: Հիշենք, որ մեզ կտակել է մարդկության պատմության ամենաանվտանգ նավը՝ Եկեղեցին, նավ, որ երաշխավորում է մեր խաղաղ եւ անվտանգ ժամանումը դեպի նավահանգիստ, նավ, որ մեզանից վանում է ցանկա-

ցած վախ ու տագնապ: Սիրելինե՛ր, մեր կյանքը հավերժ ճամփորդություն է, դեգերում կյանքի փողոցներով եւ նավարկում կյանքի օվկիանի մեջ:

Խոսքս կցանկանայի ավարտել Ի. դարի վրացի հայտնի ռեժիսոր Թենգիզ Աբուլադձեի «Ապաշխարություն» ֆիլմի մի կարճ երկխոսությամբ: Տարեց կինը, դիմելով ֆիլմի հերոսուհուն, հարցնում է՝ «Այս փողոցը դեպի եկեղեցի՞ է տանում»: Հերոսուհին հակիրճ պատասխանում է՝ «Ո՛չ», քաջատեղյակ լինելով, որ այդ փողոցում գտնվող եկեղեցին տարիներ առաջ պայթեցվել էր: Ֆիլմն ավարտվում է զառամյալ տիկնոջ հառաչանքով՝ «Ո՞ւմ է պետք այն փողոցը, որ դեպի եկեղեցի չի տանում»...

Սիրելինե՛ր, մեր բոլոր վախերը, տագնապները, անհանգստությունները ոչինչ են դառնում, երբ իրապես գտնվում ենք մեր փրկության նավի՝ Եկեղեցու մեջ, որի գլուխն է Ինքը՝ Հիսուս Քրիստոս: Ուրեմն աղոթենք, որպեսզի Աստված հավելի մեր հավատքը, ինչպես նաեւ անսասան պահի Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի-նավը իր նավապետով, նավաստիներով եւ ժողովրդով:

Թող Տիրոջ սերը, խաղաղությունը լինի մեզ հետ այսօր եւ հավիտյան. ամեն: